

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-  
ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ  
38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ,  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ  
ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ

3 մարտի 2025 թվական

**ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝**

Փոխվարչապետ (խորհրդի նախագահ)

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (խորհրդի անդամներ)՝**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Կադաստր կոմիտեի ղեկավար

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Երևանի քաղաքապետի տեղակալ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»

ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

**Հրավիրված՝**

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ

Ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ

ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի

տնօրեն

**ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

**Օրակարգային 1-ին հարց՝** Պուշկինի և Դիլիջանի թունելների հիմնանորոգման նախագծային աշխատանքների ընթացքի և նախագծող կազմակերպության հետ կնքված պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

**1. Զեկույց ներկայացրեց՝**

- 1) «Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալը՝ ներկայացնելով թունելների նախագծային աշխատանքների ընթացքը, առաջարկված նախագծային լուծումներն ու տարբերակները,

հիմնավորելով Դիլիջանի թունելի հիմնանորոգման նախագծի փոխարեն նոր թունելի կառուցման նախագծի մշակման նպատակահարմարությունը և ներկայացնելով նախագծող կազմակերպության հետ կնքված պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը:

## 2. Որոշվեց՝

- 1) Հավանություն տալ Դիլիջանի գործող թունելի հիմնանորոգման նախագծի փոխարեն նոր թունելի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր մշակելու առաջարկությանը:
- 2) Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2023թ. հունիսի 20-ին կնքված ADB/M6/CS/QCBS/03 «Դիլիջանի թունելի և Պուշկինի թունելի վերականգնման մանրամասն նախագծերի, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթղթերի և շինարարական աշխատանքների գնման մրցությամբ փաստաթղթերի տեխնիկական մասի պատրաստման Խորհրդատվական Ծառայություններ» պայմանագրի թիվ 2 Փոփոխության Համաձայնագիրը:
- 3) Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ գործող կարգին համապատասխան «ԲԵՐՆԱՐԴ Գրուպի ՋեդԹի ՋիԷմբիԷՅՉ և Ակտես Բերնարդ ՋիԷմբիԷՅՉ» համատեղ ձեռնարկության հետ սեղմ ժամկետում ստորագրել 2023թ. հունիսի 20-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/03 պայմանագրի թիվ 2 Փոփոխության Համաձայնագիրը:

**Օրակարգային 2-րդ հարց՝** Կառավարման խորհրդի 2024 թվականին ընդունված ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ

1. **Որոշվեց՝** ընդունել ի գիտություն նախապես գրավոր ներկայացված զեկույցը և հավանություն տալ օրակարգային 2-րդ հարցին:

**Օրակարգային 3-րդ հարց՝** Վարկային/դրամաշնորհային միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի առաջընթացի արդյունքների վերաբերյալ

### 1. **Ջեկույց ներկայացրեց՝**

- 1) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալը՝ ներկայացնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2 և Տրանշ 3 ծրագրերի առաջընթացը:
- 2) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալը՝ ներկայացնելով Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ (Իրանի սահման) 32 կմ

ընդհանուր երկարությամբ ճանապարհային հատվածի վերակառուցման, Քաջարանի թունելի կառուցման և Սիսիան-Քաջարան 60 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհային հատվածի կառուցման ծրագրերի առաջընթացը:

2. **Քննարկման արդյունքում որոշվեց՝** ընդունել ի գիտություն օրակարգային 3-րդ հարցը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

**ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**